Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՆԻԿՈՂՈՍ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՆԻԿՈՂՈՍ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից շնորհաւորում ենք Ձեզ ծննդեան 90-րդ տարեդարձի առիթով եւ բերում Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները։

Մեծարգոյ պրն Նիկողոսեան,

Ուրախութիւն է Հայրապետիս համար գնահատանքի խօսք ուղղել շնորհաշատ հայորդուդ եւ անդրադառնալ Ձեր բեղմնաւոր գործունէութեանը։ Ձեր կեանքը Դուք անմնացորդ սիրով նուիրել էք քանդակագործութեան ու գեղանկարչութեան զարգացմանը։ Այսօր Ձեր ստեղծագործութիւնները իրենց ուրոյն հորինուածքով զարդարում են Հայաստանի եւ Ռուսաստանի բազմաթիւ քաղաքներ, հարստացնում աշխարհի շատ երկրների թանգարաններ ու ցուցասրահներ, ի շարս որոնց նաեւ Մայր Աթոռիս հաւաքածուն։ Ձեր արուեստը ամենաբարձր մակարդակներով գնահատուած է հայրենական ու միջազգային ասպարէզներում՝ ճանաչում ու պատիւ բերելով ինչպէս Ձեզ, այնպէս եւ հարուստ ու հինաւուրց մշակոյթ ունեցող մեր ժողովրդին։

Ձեր բազմափորձ գիտելիքները, հմտութիւններն ու արուեստագէտի ճաշակը Դուք ամենայն սիրով ու նուիրումով բաշխել էք նաեւ բազմահարիւր երիտասարդ արուեստագէտների՝ երկար տարիներ դասաւանդելով Մոսկուայի Գեղարուեստի ինստիտուտում։

Մեծարգոյ յոբելեար, բարձր գնահատանքի արժանացնելով ստեղծագործական Ձեր վաստակը, ծննդեան 90-ամեայ յոբելեանի առիթով Հայրապետական այսու Կոնդակով, սիրով ընդառաջ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի խնդրանքին, շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը։

Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Բարձրեալն Աստուած Իր հանապազ

խնամքի ներքոյ պահի ու պահպանի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին, պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն եւ օրհնի Ձեր կեանքը երկնատուր բարիքներով:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 4-ն Դեկտեմբերի
Յամի Տեառն 2008 ,ւ ի թուին հայոց ՌՆԾԷ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 501